ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ՏԱՐԱԲԱՇԽՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (ԺԸ. ԴԱՐԻ ՍԿԻԶԲ - ԺԹ. ԴԱՐԻ ՎԵՐՋ)

ԱՐՍԷՆ ՑԱԿՈԲԵԱՆ

ԺԸ. դարի սկզբին Հիւսիս-արեւելեան Այսրկովկասում, մասնաւորապէս Դերբենդի, Ղուբայի եւ Մուշկուրի շրջաններն ընդգրկող տարածքում յիշատակուող մի շարք բնակավայրերի վերաբերեալ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այդտեղ բնակւում էր առաւելապէս թաթախօս հայադաւան բնակչութիւն: Այս խումբը ԺԹ.-Ի. դարերում յիշատակւում էր «Հայ-թաթեր», «թաթ հայեր», «թաթախօս հայեր» կամ «թաթ-լուսաւորչականներ» անունով:

Այս խմբի ծագումնաբանական հարցերը գիտութեան կողմից դեռեւս յստակ պարզաբանուած չեն, եւ այդ խնդրի վերաբերեալ արտայայտուած են տարբեր կարծիքներ: Որոշ մասնագէտներ, հիմք ընդունելով նրանց կողմից օգտագործուող թաթերէն լեզուն, կարծիք են յայտնել, որ այս խումբը ունի իրանական ծագում եւ յետագայում, ընդունելով հայադաւան քրիստոնէութիւնը, ձեռք է բերել հայկական ինքնութիւն[1]: Բացի այդ, օգտագործուող «թաթ քրիստոնեաներ» կամ «թաթ լուսաւորչականներ» տերմինը ինքնին ցուցում է խմբի էթնիկական առումով իրանական ծագման եւ ինքնութեան մասին[2]: Նշենք, որ որեւէ խմբի էթնիկական բնութագրման համար լեզուական գործօնը կարեւոր, բայց ոչ գլխաւոր պայման է եւ այն ոչ միշտ կարող է համընկնել էթնիկական ինքնութեանը, ծագմանը: Ըստ այլ տեսակէտների՝ այս խումբը ունի հայկական ծագում եւ յետագայում է դարձել թաթախօս. այս տեսակէտի համատեքստում շրջանառւում է «թաթախօս հայեր» տերմինը[3]: Վերոնշեալ կարծիքները, սակայն, անհրաժեշտ աղբիւրագիտական կամ տեսական հիմնաւորում չունեն եւ շրջանառւում են որպէս վարկածներ[4]:

Առայժմ մանրամասնօրէն չանդրադառնալով թաթախօս հայադաւան այս խմբի ծագումնաբանութեան եւ ինքնութեան խնդիրներին,

այս յօդուածով փորձ է արւում ի մի հաւաքել ԺԸ.-ԺԹ. դարերի տեղեկութիւնները նրանց տեղաբաշխուածութեան վերաբերեալ, մի խնդիր, որն առաւելապէս զուգորդւում է տեղահանութիւնների եւ տեղափոխութիւնների հետ:

1718ին յիշատակւում են Խաչմաս[5] եւ Նուգդի գիւղերը: Հետաքրքրական է մօտ 15 տուն հայ բնակչութիւն ունեցած Նուգդի գիւղի նկարագրութիւնը: Այն գերաններով եւ աւազով ամրացուած պարըսպով պաշտպանուած բնակավայր էր: Ունէր մի մուտք, որի դարպասները գիշերները փակում էին՝ աւազակներից պաշտպանուելու նպատակով[6]:

Մուշկուրի, Դերբենդի եւ Ղուբայի շրջանի մի շարք բնակավայրերի անունները (այդ թւում՝ Նուգդին) նշւում են նաեւ 1725ին: Այդ տարիները Արեւելեան Այսրկովկասում քաղաքական առումով խառը ժամանակաշրջան էին: Հակաիրանական ուղղուածութիւն ունեցող անջատողական շարժումները ուղեկցւում էին տարածքաշրջանում սիւննիզմի դիրքերի ամրապնդմամբ, շիա մահմեդականների, հայերի եւ հրեաների հալածանքներով[7]: Վերոյիշեալ գիւղերը յիշատակւում են այդ դէպքերի կապակցութեամբ:

Մարտիրոս Վարդապետի Դերբենդից վրացիների Վախթանգ Զ. (1716-24) թագաւորին գրած նամակում նկարագրւում է Մուշկուրի 12 «հայկական» անուանեալ, սակայն իրականում թաթախօս հայադաւան բնակչութիւն ունեցող, գիւղերի վիճակը եւ վերջինից օգնութիւն է խնդրւում[8]: Այդ գիւղերից էին՝ 1. Ղարաղուրթլու, 2. Մալախալիլ, 3. Նուկդի, 4. Փատարմեկ, 5. Վանամիր, 6. Մուսուրման Պարախում, 7. Ղարաջալու, 8. Արմանի Պարախում: Վարդապետը նշում է, որ «Մսկուրու եւ Շապրանու հայերը փախչում են» եւ, որ Փատարմեկի, Վանամիրի եւ Մուսուրման Պարախումի բնակիչները ապաստանել են Մալախալիլ եւ Նուկդի (Նուգդի) գիւղերում: Այստեղ են նաեւ Ղարաջալուի եւ Արմանի Պարախումի բնակիչները, որոնք «կէս ու կէս եկել են, էլի այս հայերի միջումն են»[9]: Նշւում է, որ «այն գեղերանք որ փախել են եկել ՃՃ (100) տուն է, հալա շատ տուն կուկայ, թէ որ գեղս տէրութիւն անող լինի»: Փախստականների մի մասը յետագայում ռուսական հովանաւորութեան ներքոյ, վերադարձան իրենց բնակավայրերը: Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԸ. Դարում ռուսերէն ժողովածուի ծանօթագրութիւնների մէջ նշւում է, որ Մուսուր-

ման Պարախումի բնակիչները հաւանաբար մահմեդական ադրբեջանցիներ են եղել, որի պատճառով էլ գիւղը կոչուել է Մուսուրման Պարախում՝ ի տարբերութիւն Արմանի Պարախումի, որտեղ բնակուել են քրիստոնեայ հայեր[10]: Փաստերը, սակայն, ցոյց են տալիս, որ ակտիւ մահեմեդականացման գօտում ընկած Պարախում գիւղերում ընդհուպ մինչեւ ԺԸ. դարավերջը բնակուել է հայադաւան բնակչութիւն: Խայտաբղէտ էթնիկական ու դաւանական նկարագիր ունեցող Արեւելեան Այսրկովկասի տարածքում հանդիպող էթնօդաւանական, բնակավայրերի բնակչութեան մասին տերմինները կարող են բազմիմաստ լինել եւ միշտ չէ որ արտայայտում են իրական բովանդակութիւնը: Այդ իսկ պատճառով այդ տերմիններն յաճախ յստակեցման կարիք ունեն: Վերոնշեալ երկու գիւղերը որոշ աղբիւրներում նշւում են նաեւ Մեծ եւ Փոքր Պարախում անուններով:

1797ին վերաբերուող հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս ԺԸ. դարավերջի եւրոպացի ճանապարհորդ Եան Պոտոցկին: Նա նշում է, որ Մուշկուրի հայերը խօսում էին թաթերէն: Թաթերէն էին խօսում նաեւ Շիրվանի երկրագործ հրեաները, որոնք սակայն իրենց միջեւ մի այլ լեզու էին գործածում: Ուշագրաւ է Պոտոցկու նշումը թէ իր տեղեկութիւնները նա վերցրել է մի հայից, որի թելադրութեամբ էլ ինքը միաժամանակ կազմել է թաթերէնի բառարան[11]:

Հայ-թաթերի բնակավայրերի յաջորդ յիշատակութիւնը 1796ի ռուսական դէպի Այսրկովկաս արշաւանքի կապակցութեամբ է, որ մեծ ազդեցութիւն եւ հետեւանքներ ունեցաւ նրանց ճակատագրի վրայ: Այդ ժամանակ, Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանը՝ Մուշկուրի եւ Դերբենդի 9 «հայկական» գիւղերի անունից, դիմում է ռուսական հրամանատարութեան եւ օգնութիւն ակնկալում՝ նշելով, որ այդ գիւղերը դեռեւս 1792ին հաւատարմութիւն են յայտնել Ռուսաստանին եւ որի հետեւանքով մահմեդական իշխանութիւնների կողմից ենթարկւում են ճնշումների ու հալածանքների: Արղութեանը խնդրում է այդ գիւղերի բնակիչներին տեղաւորել Ղուբա քաղաքում եւ նրանց անմիջապէս ենթարկել այստեղի ռուսական իշխանութեանը՝ ազատելով նաիբի իշխանութիւնից: Դիմումում նկարագրւում է նաեւ Քիլվարի դրութիւնը եւ նշւում, որ տեղի բնակչութիւնը՝ շրջապատուած լինելով պարսիկներով[12], ենթարկւում է հալածանքների: Արղութեանը խնդրում է, որ նրանց վերջնական կործանումից փրկելու համար, քիլ-

վարցիներին եւ տարբեր վայրերում փոքր քանակութեամբ բնակուող հայերին թոյլ տալ գաղթել Դերբենդ կամ այլ հայկական գիւղեր[13]:

Արղութեանը ռուսական հրամանատարութեանը ուղղուած մի այլ նամակում խնդրում է հնարաւորութեան սահմաններում լեզգիական իշխանութիւնների ճնշումներից պաշտպանել Մուշկուրի նահանգի Խաչմաս, Ղարաջալու, Մեծ եւ Փոքր Պարախում, Քիլվար, Ղարաղուրթլու եւ Ազատօղլի, ինչպէս նաեւ Դերբենդի նահանգի Մուլախալիլ (Մոլլա-Խալիլ) եւ Նուգդի գիւղերը, որոնք նամակում յիշատակւում են իրենց տանուտէրերով եւ իւզբաշիներով[14]:

Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Բ-ի (1762-1796) մահուան կապակցութեամբ, սակայն, վերոյիշեալ արշաւանքը դադարեցուեց եւ ռուսական զօրքերը վերադարձան: Ռուսական արշաւանքին ցոյց տուած աջակցութիւնը է՛լ աւելի բարդացրեց առանց այդ էլ բարդ քաղաքական, էթնիկական ու կրօնական միջավայրում գտնուող քրիստոնեայ այս խմբի յետագայ գոյութիւնը Ղուբայի, Մուշկուրի եւ Դերբենդի տարածքում: Արղութեանի 1787ին կազմած ու ռուսական իշխանութիւններին ուղղած մի այլ փաստաթղթում նշւում է, որ ռուսական զօրքերի հեռանալուց յետոյ 9 հայկական գիւղերին կործանում է սպասւում. նա խնդրում է թոյլ տալ 500 ընտանիքների՝ 4000 հայ քրիստոնեաների, ռուսական զօրքերի հետ հեռանալ Ռուսաստան: Վերջիններս, ինչպէս նշւում է փաստաթղթում, միայն 3-4 նաւ էին խնդրում Ղզլար եւ Աստրախան հասնելու համար, որտեղ եւ իրենց կամքով պատրաստ էին տնօրինելու իրենց ճակատագիրը: Արղութեանը աւելացնում է, որ բաւական է երկրագործներին, արհեստաւորներին, մետաքսագործներին ու խաղողագործներին ապահովել յարմար հողատարածքներով[15]:

Ինչպէս վերը բերուած փաստաթղթում է ասուած, հայերը փոքր քանակութեամբ ապրում էին նաեւ տուեալ տարածքի այլ բնակավայրերում: Սկզբնաղբիւրներում այդ մասին պահպանուել են որոշ տեղեկութիւններ: Օրինակ՝ ԺԸ. դարի սկզբում Կալաչեար մահմեդականաբնակ գիւղում նշւում է մի քանի հայ ընտանիքների գոյութեան մասին[16]: Ըստ Պիոտր Բուտկովի՝ 1727ին Նիգաբադի ուեզդում (գաւառում) կային Բեբէլի եւ Մեծ ու Փոքր Խաչմաս գիւղերը, որոնք ԺԸ. դարի վերջին ունէին 52 տուն հայ բնակչութիւն[17]: ԺԸ. դարի վերջում Հիւսիսային Կովկաս գաղթածների մէջ յիշատակւում են Ղուբայի շրջանի Ուլվար, Խաչնի, Սալիք, Ղասմքեանդ, Թալաբի (ներքին եւ



Այս քարտեզը ներկայացնում է Հիսիս-Արեւելեան Այրարատեանի եւ Հարաւային Դաղստանի թաթական բնակավայրերի պատկերը: Քարտեզում ընդգծուած են այս տարածաշրջանի մէջ մտնող, յօդուածում յիշատակուած բնակավայրերի մի մասը:

Քարտեզը վերցուած է Սերգէյ Ղարախչեանի «Մաղրասացիների Թարեբէն Լեզուն» ատենախօսութիւնից, որը պահւում է Երեւանի Պետական Համալսարանի Գրադարանում:

Քարտեզը կազմուել է 1970ական թուականներին եւ համապատասխանում է այդ ժամանակաշրջանի տեղանուանական գանկին:

վերին), Դիխան կամ Օհանխան[18], ինչպէս նաեւ Դերբենդի շրջանի Պօղոսքեանդ[19] բնակավայրերի հայերը։ Բանասէր Մակար Ծ. Վրդ. (յետագայում՝ Եպիսկոպոս) Բարխուտարեանցը նշում է, որ ԺԹ. դարի վերջին Ղուբայից հարաւ-արեւմուտք գտնուող Սպիք լեզգիաբնակ գիւղում դեռեւս պահպանուել էին աւերակ եկեղեցու հետքերը եւ հանգստարանը, իսկ գիւղի հայադաւան բնակիչները՝ անխախտ մնալով իրենց հաւատքին եւ մահմեդականների ճնշումներից ձանձրացած, գաղթել էին Ռուսաստան[20]։ Այդ տարիներին գաղթել է նաեւ Թալաբի գիւղի (ներքին եւ վերին) 500 տուն բնակչութիւնը՝ 5 քահանաներով հանդերձ[21]։

Բարխուտարեանցը այդ տարածքի Բոստանչի եւ Վէլէմիւր գիւղերի մասին նշում է, որ նրանցում գերեզմանները թուագրուած են մինչեւ 1796 ու եզրակացնում, որ «երեւի թէ սոքա եւս գաղթած են Զուբովի ժամանակ»[22], այսինքն՝ 1796ին։ Հնարաւոր է, որ Վէլէմիւր գիւղը 1725ին յիշատակուած Վանամիրն է։

Հայադաւան բնակչութիւն է եղել նաեւ Դերբենդի շրջանի Բիլիջի գիւղում։ Այդ են վկայում ԺԹ. դարի վերջում գիւղում դեռեւս պահպանուած «Փօղուս բուլաղ» (Պօղոսի աղբիւր) անունը կրող հայկական գերեզմանատունը[23] եւ Ռոստոմ Բէկ Երգնկեանցի հաղորդած այն տեղեկութիւնը, ըստ որի Մոլլա-Խալիլ գիւղի մօտ գտնուող Սուրբ Գրիգորիսի մատուռը կառուցել են Մոլլա-Խալիլի եւ Բիլիջիի բնակիչները[24]։

Այդ տարածքաշրջանում, անշուշտ, կար եւ բուն հայկական բնակչութիւն։ Այդպիսին էր, հաւանաբար, Դիխան (դի = թաթերէն «գիւղ», այստեղից էլ՝ «Խանի Գիւղ») կամ Օհանխան գիւղը, որն, ըստ Բարխուտարեանցի տեղեկութեան, հիմնել էր արցախցի Օհան Խանը՝ իր հետ բերած մօտ 100 տուն բնակչութեամբ[25]։ Ըստ Մոսկուայի Համալսարանի պրոֆեսոր Բորիս Միլլէրի տեղեկութեան՝ իբրեւ թէ այդ գիւղը հիմնուել է ԺԸ. դարի կէսերին։ Բնակիչները՝ հաստատուելով այդտեղ, իւրացրել էին թաթերէնը[26]։ Միլլէրը նշում է, որ այդ վկայութիւնը վերցուած է բանասէր Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանից, սակայն վերջինիս մօտ այդպիսի տեղեկութիւն չգտանք։ Այսուհանդերձ, չի բացառուում, որ Օհանխանի բնակչութիւնը եւս թաթախօս լինէր։

1720ականների վերջերին եւ 1730ականների սկզբներին Ղարաբաղից ու Սիւնիքից հայ գաղթականութեան հոսք է սկսւում դէպի ռուսական զօրքերի կողմից գրաւուած մերձկասպեան տարածքներ։ Այդ

բնակչութեան մեծ մասը հաստատուում է մերձկասպեան տիրոյթներում, Դերբենդի ու Մուշկուրի հայկական գիւղերում։ Վերաբնակիչների զգալի մասը, սակայն, 1735ին Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքուած համաձայնագրից յետոյ, ռուսական զօրքերի հետ հեռանում է[27]։ Հնարաւոր է, որ այդ տարիներին, արցախցի Օհան խանը՝ վերաբնակիչներով հանդերձ, հիմնել է Օհանխան գիւղը։

ԺԸ. դարի վերջին ռուսական զօրքերի հետ հեռացել էր նաեւ Քիլվար եւ Խաչմաս գիւղերի մի մասը։ Քիլվարում մնացել էր 50 տուն[28]։ Խաչմաս գիւղի վերաբերեալ Սմբատեանցը նշում է, որ այդ կողմերում հայոց բաւական բազմութիւն է բնակուել, որ յետոյ հեռացել է Մոզդոկ, Ղզլար, Պետրովսկի եւն.[29]։ Ըստ Միլլէրի, այդ տարիներին դէպի Ռուսաստան հեռացան Ղուբայի 10000 «հայեր»[30]։ Սմբատեանցը՝ անդրադառնալով այդ տարիներին Հիւսիսային Կովկաս տեղափոխուած բնակչութեանը, նշում է որ «Դարբանտ քաղաքի եւ շրջակայ գիւղերի որպէս եւ Մոլլա Խալիլի, Պօղոս Քեանդի եւ այլ գիւղերի ժողովուրդը» գաղթել է «Ղզլար, Մոզդոկ, Պետրովսկի, Մաջառ (Սբ. Խաչ)» եւ որ նրանց «լեզուն, սովորութիւնը եւ աւանդութիւնը նոյն է, ինչ-որ այսօր Դարբանտի, Խաչմասի, Քիլվարի, Մադրասայի հայոցն է»[31]։

1797ին ռուսաց Պաւել Ա. (1796-1801) կայսրը մի հրամանագրով վաւերացնում է, որ Դերբենդից եւ յարակից տարածքներից դուրս եկած հայերին, ըստ իրենց ցանկութեան, պէտք է բնակեցնել Ղզլարում կամ Աստրախանում՝ տրամադրելով հողատարածքներ[32]։ Հնարաւոր է, որ հենց այդ ժամանակ՝ արտագաղթի հենց սկզբում, այդ տարածքներից դուրս եկած հայ-թաթերի մի փոքր մաս հաստատուեց Աստրախանում։ Հայ-թաթերի մի հատուածի Աստրախանում հաստատուելու մասին նշում են Միլլէրն ու Սերգէյ Ղալթախչեանը[33]։

Այնուամենայնիւ արտագաղթեալ հայ-թաթերի հիմնական հատուածը բնակութիւն հաստատեց Հիւսիսային Կովկասում։ Դեռեւս 1798ին Պաւելի Սենատին ուղղած մի հրամանագրում նշում է «դերբենտցի հայերին» Ղզլարից վերեւ եւ հին Մաջառ բնակավայրի մօտ հողատարածքներ յատկացնելու մասին[34]։ 1799ի Ապրիլի 15ին՝ Սենատին ուղղուած Պաւելի մի այլ հրամանագրում, ինչպէս նաեւ Հոկտեմբերի 28ի հրովարտակում յիշատակւում են «Դերբենտի եւ Մուշկուրի հայերին» տրուելիք իրաւունքներն ու արտօնութիւնները՝ նոր տարածք-

ներում բնակաւորուելու եւ հին Մաջառ բնակավայրի տեղում Սուրբ Խաչ անունով քաղաք հիմնելու վերաբերեալ[35]։

Հետաքրքրական է, որ հենց այս դէպքերի կապակցութեամբ 1812ին կազմուած պատմական մի փաստաթղթում հանդիպում է «թաթ հայեր» տերմինը՝ «Ղզլարի թեզիկ հայեր» (Kizlarskie tezikskie armiane)[36]։ ԺԹ. դարի ռուսական որոշ աղբիւրներում «թաթ» էթնոնիմը նշւում է «թեզիկ»(tezik) տերմինով[37]։ Սա ուշագրաւ է այն առումով, որ «Հայ-թաթեր» կամ «թաթ հայեր» տերմինը ԺԹ.-ի. դարերում, գլխաւորապէս հանդիպում էր գիտական գրականութեան մէջ, իսկ սա ուղղակի վկայութիւն է պաշտօնական փաստաթղթում։

ԺԸ. դարավերջին Արդութեանի կազմած մի տեղեկագրում նշւում են «Դերբենտից եւ Մուսկուրից եկած» 610 ընտանիք կամ 5212 շունչ։ Ըստ նոյն տեղեկագրի, Մաջառում կար 120 տուն՝ 680 շունչ բնակչութեամբ[38]։ Չի բացառւում, որ սրանց մի մասը եւս գաղթած լինէր Դերբենդից ու Մուշկուրից։

Գաղթականների հաստատուած նոր վայրերում հիմնուեցին հաւաքական բնակավայրեր. հանդէս եկան իրենց նախկին գիւղերի անունը կրող գիւղեր։ ԺԹ. դարի ռուսական մի փաստաթղթի համաձայն, ԺԸ. դարավերջին գաղթած բնակիչները Ղզլարի ուեզդում հաստատուել են երեք գիւղերում՝ Կարաժալինսկ (Ղարաջալի), Մալախալինսկ (Մոլլա-Խալիլ) եւ Դերբենտսկ[39]։ Այս երեք բնակավայրերը յիշատակւում են դեռեւս 1813ից[40]։ Ռուսական մի այլ փաստաթղթում նշւում է, որ «Դերբենտի եւ Մուշկուրի հայերը», թուով՝ 3376 հոգի, 1797ին հաստատուել են Ղզլարում, Ղզլարի, Մոզդոկի եւ Գէորգիեւսկի ուեզդներում։ Ըստ 1818ի տուեալների՝ Մոզդոկի ուեզդում նշւում է Կասաեւ-Եամա բնակավայրը (105 տուն), Գէորգիեւսկի ուեզդում Սուրբ Խաչը (12 տուն), Ղզլարի յարակից տարածքներում՝ Մալախալինսկոյէն (Մոլլա-Խալիլ, 120 տուն), Կարգալինսկոյէն (153 տուն) եւ Դերբենտսկը (89 տուն)[41]։

Պատմաբան եւ բանասէր Հ. Մինաս Վարդապետ Բժշկեանցը իր շրջագայութեան ժամանակ Ղզլարից հիւսիս յիշատակում է Դերբենդից գաղթած «Հայերի» հիմնած գիւղերի մասին եւ նրանցից անուանում է հետեւեալները՝ Բեքեթէ, որտեղ բնակւում էին 70 տուն «Դարբանդեցի Հայք», Մոլլախալիլ՝ 100 տուն «գիւղականք Դարբանդու», Ղարաջալիլ՝ 50 տուն «գիւղականք Դարբա[ն]դու»[42]։ Բեքեթէն նշւում

է նաեւ աւելի վաղ շրջանի աղբիւրներում՝ իբրեւ «Բեքթէշ դարբանդեցուց գեղջ» (1817ին)[43], «գեղջ Դարբանդուց» (1822ին)[44] եւն.:

Ինչպէս նշուեց, ԺԸ. դարում գաղթած բնակչութեան մի մասը հաստատուեց Կասաեւ-Եամա բնակավայրում, որ յայտնի էր նաեւ Ղուրա անուամբ: 1852ին Կասաեւ-Եաման վերանուանուեց Եղեսիա եւ այն ժամանակ ունէր 1566 բնակիչ[45]: Եղեսիայի բնակիչները թէեւ լուսաւորչականներ էին, բայց շատ մահմեդական սովորոյթներ ունէին, օրինակ՝ համարեա բոլոր տղամարդիկ սափրում էին գլուխները[46]: Սարգիս Եպիսկոպոս Ջալալեանցի այցելութեան ժամանակ՝ ԺԹ. դարի կէսերին, Եղեսիան ունէր 300 տուն բնակիչ: Նա յիշատակում է նոյն բնակավայրի երեք տարբեր անուանումները՝ «Կասաեամ, Ղորա, Նոր Եղեսիա» եւ նշում, որ «չիք ուսումնարան աստ եւ չգիտեն խոսիլ հայերէն, սովորական բարբառ նոցա է պարսկերէն, զոր ուսեալ են ի Դարբանդ» եւ որ «ունեն մի եկեղեցի»[47]: Բնակչութեան մասին Ջալալեանցը նշում է, որ «գաղթեալք ի Դարբանդ», իսկ Նոր-Դարի թղթակիցը մանրամասնում է, որ Եղեսիայի բնակիչները գաղթել են Ղուբայից, Քիլվարից, Խաչմասից: Նրանք այստեղ թէեւ զբաղւում էին երկրագործութեամբ, այգեգործութեամբ ու խաղողագործութեամբ, սակայն նրանց նախնիների զբաղմունքը շերամապահութիւնն էր եղել[48]:

Եղեսիան այժմ էլ հայ-թաթերի խոշոր բնակավայր է, որտեղ 1980ականներին շատ ընտանիքներում դեռեւս խոսում էին «պարսկերէն ենթաբարբառով»[49]:

ԺԸ. դարի վերջին «Դերբենտի ու Մուշկուրի հայերին» հին Մաջառ բնակավայրի տեղում Սուրբ Խաչ անունով քաղաք հիմնելու արտօնութիւն էր տրուել, որպէսզի առեւտրականներն ու արհեստաւորները հաստատուէին այդտեղ: Ռուսական իշխանութիւնների սպասելիքները չարդարացան, սակայն: Դեռեւս Պոտոցկին նշում է՝ 1798ի վերաբերեալ, որ այդ վայրը յատկացուած էր «Շիրվանից նոր եկած հայերին», որոնք դա չեն ցանկացել[50]: 1818ին այստեղ 12 տուն էր հաստատուել, որոնք ցանկանում էին տեղափոխուել Ղզլարում եւ Բեքթէշ գետի մօտ հաստատուած իրենց հայրենակիցների մօտ[51]:

Ղզլարին յարակից տարածքներում հայ-թաթերի Դերբենտսկ, Կարաժալիսկոյէ (Ղարաջալի) եւ Մալախալինսկոյէ (Մոլլա-Խալիլ) գիւղերը յիշատակւում են նաեւ 1831ին[52]: 1833ին, այդ գիւղերի բնակիչները՝ «հակառակ իրենց կամքի եւ ցանկութեան», դարձուեցին «գծային (սահմանային) կոզակներ»: 1836ին հայերի վրայից այդ պար-

տաղրանքը վերացուեց պայմանով, որ կառավարութեան կողմից իրը սահմանային գիծ նշուած այդ տարածքներից բնակիչները տեղափոխուեն Սուրբ Խաչ։ Ըստ 1845ին ընդունուած մի այլ խիստ որոշման, այդ գիւղերի բնակչութիւնը 4 տարուայ ընթացքում պէտք է վաճառէր իր այգիները, իսկ չվաճառուածները 4 տարի յետոյ անվճար անցնելու էին կոզակական իշխանութիւններին[53]։ Այնուամենայնիւ, անսալով սուրբխաչեցիների բողոքին՝ ռուսական իշխանութիւնները 1849ին մեղմացրին իրենց որոշումը եւ այդ հողատարածքները թողնուեցին բնակչութեան տնօրինութեանը՝ վերացնելով վաճառքի վերաբերեալ ժամկէտային սահմանափակումը[54]։

Չնայած նման վերիվայրումներին, Ղարաջալի գիւղը ԺԹ. դարի վերջին դեռեւս կար։ Այն 1912ին նշւում է որպէս «թաթախօս հայ գիւղ»[55]։ Ի. դարի վերջին հայ-թաթեր կային նաեւ Ղզլարին յարակից Սարաֆան (Շելկոզաւոդսկայա)[56] գիւղում։ Ըստ Բարխուտարեանցի վկայութեան, Ղուրայում, Մաջառում եւ Սարաֆան գիւղում հաստատուած «գաղթականներն ցարդ պահպանած են իւրեանց հետ տարած լեզուն հայերէնի հետ միասին»[57]։

Ջալալեանցը Սուրբ Խաչ իր այցելութեան ժամանակ նշում է, որ այնտեղ կար 600 տուն՝ «գաղթեալք ի Դարբանդ» եւ «չգիտեն խօսիլ զհայերէն»[58]։ Նա յիշատակում է, որ «կից այս քաղաքին փոքրիկ Մաճառն», ունէր 26 հայ գերդաստան եւ փոքր ու անշուք մի եկեղեցի։ Հաւանաբար այս բնակավայրը նկատի ունի Միլլէրը, երբ գրում է, որ հայ-թաթեր հաստատուել էին Մաջառում եւ Պրիկումսկում (Սուրբ Խաչ)։ Սուրբ Խաչը ԺԹ. դարի աղբիւրներում կոչւում է նաեւ Մաջառ, իսկ ԺԹ. դարի առաջին կէսից մի այլ տեղեկութեան համաձայն, այստեղ հաստատուած գաղթական բնակիչները կոչւում էին «մաջառցիներ»[59]։

Նոր-Դարը 1884ին գրում էր, որ Սուրբ Խաչի բնակչութիւնը գաղթել է 1840ին՝ Ղզլարին մերձ Բեքեթէ գիւղից, եւ որ այնտեղ կան ընտանիքներ, որտեղ դեռեւս գործածական է թաթերի լեզուն[60]։ Ըստ մէկ այլ տեղեկութեան՝ Սուրբ Խաչի բնակչութիւնը, որը գաղթել էր Դերբենդի կողմերից, մինչեւ 1841-1842 բնակւում էր Բեքեթէ աւանում եւ միայն այնուհետեւ տեղափոխուել էր Սուրբ Խաչ[61]։

Ինչպէս նշում է Միլլէրը, Սուրբ Խաչում կային քիլվարցիներ, ղարաջալցիներ ու մաջառցիներ (Դերբենդին յարակից Մաջառ գիւղից)։ Քիլվարցիները 1920ականներին դեռեւս պահպանել էին թաթերէնը եւ

կոչւում էին «մալախանցիներ» (malakhantsi), քանի որ իրենց հայրենիքում եղել են Ղուբայի խանի (մալխան) հպատակներ[62]:

Աւելի ուշ, նիւթերի պատառիկների հիման վրայ ազգագրագէտ Նատալիա Վոլկովան մասնաւորեցրեց, որ ԺԸ. դարի վերջին հիւսիս-արեւելեան Այսրկովկասից գաղթած բնակչութեան հիմնական զանգուածը հաստատուել էր Ղզլարում ու Մոզդոկում[63]: Միլլէրը նշում է, որ հայ-թաթեր հաստատուել էին նաեւ Տուապսէում ու Անապայում[64]: Հայ-թաթեր կային նաեւ Պետրովսկում[65] եւ Անդրէա բնակավայրում[66]:

Բազում տեղեկութիւններ կան նաեւ հայ-թաթերի մի հատուածի պատմական տարբեր ժամանակաշրջաններում մահմեդականացման մասին: Խիզիում թաթերի մօտ տարածուած աւանդութեան համաձայն, տեղի բնակչութիւնը մինչ իսլամի ընդունումը հայադաւան է եղել[67]:

Հիւսիս-արեւելեան Այսրկովկասում, որը նաեւ թաթերի բնակութեան հիմնական տարածքներից է, ըստ Բարխուտարեանցի, կային «80000 բնակիչք», որոնք նախկինում հայադաւան են եղել, իսկ այժմ Օմարի աղանդի հետեւորդներ, այսինքն՝ սիւննի-մահմեդականներ են, սակայն դեռեւս պահպանում են մի շարք քրիստոնէական սովորոյթներ: Օրինակ՝ նրանք աջ ձեռքով խաչակնքում են նոր հունցած խմորի, կրակից նոր վերցրած կերակուրի եւ նոր քնեցրած երեխայի վրայ եւն.[68]:

Ջալալեանցը նշում է, որ Քիլվարի շուրջ բնակւում են «Պարսիկք կր[օն]ափոխեալք ի Հայոց», բայց «տոհմանուն նոցա մնան անփոփոխ՝ որպէսիք են Օհանօղլի, Սարգիսօղլի, Մարգարօղլի եւն.»: Ըստ Ջալալեանցի՝ կրօնափոխութիւնը եղել է ԺԴ. դարու վերջաւորութեան կամ ԺԵ. դարու սկիզբը՝ Լենկ Թեմուրի օրօք[69]:

Նախկինում հայ-թաթերով բնակեցուած, սակայն ԺԸ. դարի վերջին արդէն մահմեդականացուած գիւղ էր Ղուբայի շրջանի Թալարին (վերին եւ ներքին): ԺԹ. դարի վերջին այստեղ պահպանւում էր կիսաւեր եկեղեցին եւ գերեզմանատունը: Միլլէրը նշում է, որ ԺԸ. դարի վերջին գիւղի հիմնական բնակչութիւնը հեռանում է Ռուսաստան, իսկ մնացած մօտ մէկ տասնեակ տունը ընդունում է մահմեդականութիւն[70]: Աւելի հանգամանալից է Բարխուտարեանցի մօտ եղած տեղեկութիւնը, ըստ որի գիւղի 500 տուն բնակչութիւնը՝ 5 քահանաներով հանդերձ, գաղթում են: Այնուհետեւ 8 գերդաստան ետ է բերւում,

որոնց եւ մահմեդականացնում են։ ԺԹ. դարի վերջին, գիւղում դեռեւս հանդիպում էին հայկական անուններ՝ Արթին ուշաղի, Բաղդասար ուշաղի, Օհան օղլի[71]։ Մահմեդականացուած էին նաեւ Զէյուա ու Զերգաւա գիւղերը։ Վերջինիս բնակիչները դեռեւս 1920ականներին իրենց համարում էին նախկին «հայեր»։ Թէեւ Զէյուայի բնակիչները չէին ընդունում, որ իրենց նախնիները «հայեր» են, սակայն այդ մասին լաւ գիտէին Թալաբիի եւ Զերգաւայի բնակիչները[72]։ Այդ տարածքաշրջանում կային նաեւ հայկական յուշարձանների ու լքուած բնակավայրերի բազմաթիւ հետքեր։

Հայ-թաթերի մի հատուած էլ մահմեդականացուեց Գէօգչայ գետից արեւելք ընկած տարածքում։ Միլլէրը տեղեկացնում է, որ այդ տարածքի թաթերը իրենց համարում էին նախկին հայեր[73]։ Բարխուտարեանցը, նշելով Շաքիի շրջանի մահմեդականացուած՝ «տաճկացեալ հայոց» մասին, գրում է, որ Գէօգչայի գաւառում, Թալաստան գիւղում եւ շրջակայքում, լեզգիների միջոցով ԺԸ. դարում մահմեդականացուել էր 5000 ծուխ[74]։ 1886ի մարդահամարի տուեալներով Թալաստան գիւղում բնակւում էին թաթ-սիւննիներ[75]։

Ըստ մեր բանասացներից մէկի հաղորդման՝ «Թալաստանում հայեր են ապրել, որոնք իրենց լեզուն են ունեցել, ուրիշ լեզուով են խօսացել»[76]։ Ըստ մէկ այլ բանասացի՝ ինքը տեսել է, թէ ինչպէս լահիճ (հաւանաբար տուեալ դէպքում՝ թաթ - Ա.Ց.) տանտիկինը դեռ հացի խմորը չկտրած, խաչ է արել եւ իր հարցին՝ «ինչո՞ւ», ասել է, որ իր հայրերից ու մայրերից է տեսել՝ «Իրենց նախնիները հայեր են եղել, յետոյ են կրօնափոխ եղել։ Իրենք հայից գոյացած են»[77]։

Նոյն տարածքում նախկին հայ-թաթեր էին ապրում նաեւ Հաֆթասիոբ գիւղում, որի բնակիչները, նշում են, մահմեդականութիւն են ընդունել ԺԴ.-ԺԵ. դարերում՝ շիրվանշահերի իշխանութեան ժամանակ[78]։

Արեւելեան Այսրկովկասի թաթերով բնակեցուած տարածքներում կային հայկական քրիստոնէական յուշարձանների ու գերեզմանատների բազմաթիւ հետքեր, շատ յաճախ նաեւ՝ «Արմանի» բաղադրամասով տեղանուններ։ Օրինակ՝ Ապշերոնեան Սաբունչի թաթ մահմեդականների բնակավայրը հարեւան Բալախան գիւղի թաթերը կոչում էին Արմանի Դի (հայկական գիւղ)[79]։ Այն յայտնի էր նաեւ Արմանի

Բուլաղի (հակական աղբիւր)[80] անունով։ Ղուբայի շրջանում կար Արմանի Դիգէ բնակավայրը[81]։

ԺԹ. դարի վերջին Այսրկովկասում մնացել էին հայ-թաթերի երեք հիմնական գիւղեր՝ Մադրասա (Շամախու շրջան), Քիլվար եւ Խաչմաս (Ղուբայի շրջան)։ ԺԹ. դարի վերջին յիշատակուող Խաչմասը նշւում է որպէս Նոր Խաչմաս եւ նրանից քիչ հեռու գտնուում էին հին Խաչմասի աւերակները[82]։ ԺԸ. դարի վերջի եւ ԺԹ. դարի սկզբի որոշ սկզբնաղբիւրներում նշւում է Մեծ եւ Փոքր Խաչմաս գիւղերի մասին[83], թէեւ առաւել պատասխանատու փաստաթղթերում, մասնաւորապէս՝ ռուսական հրամանատարութեանը դիմած 9 գիւղերի շարքում յիշատակւում է միայն մէկ Խաչմաս։ Հնարաւոր է, որ ԺԹ. դարի վերջում յայտնի Խաչմասը յիշուող գիւղերից որեւէ մէկը լինէր։ ԺԹ. դարի կէսերի մի քարտէզում նշուած է Մեծ Խաչմաս[84]։ Այդ գիւղի մի մասում բնակւում էին հայ-թաթերը՝ 30 տուն, իսկ միւս մասում՝ թրքալեզու մահմեդական բնակչութիւն։

ԺԸ. դարի վերջին Խաչմասից նոյնպէս արտագաղթել են դէպի Ռուսաստան։ Սմբատեանցը նշում է, որ այդ կողմերում բաւական հայոց բազմութիւն է բնակուել, որ յետագայում հեռացել է Մոզդոկ, Ղզլար, Պետրովսկի եւն.[85]։ Նոր-Դարի վերը նշուած մի տեղեկութեան մէջ ասւում է, որ Եղեսիայի բնակիչները գաղթել են նաեւ Խաչմասից[86]։

ԺԸ. դարի վերջին Ռուսաստան էր գաղթել նաեւ Քիլվարի բնակչութիւնը եւ գիւղում մնացել էր 50 տուն[87]։ Ինչպէս նշուեց, քիլվարցիներ կային Սուրբ Խաչում, Եղեսիայում, նաեւ Ղզլարում եւ շրջակայքում[88]։ ԺԹ. դարի վերջին, ըստ Բարխուտարեանցի, գիւղն ունէր 100 ծուխ, 420 բնակիչ[89]։

Մեղու Հայաստանի լրագիրը 1871ին յիշատակում է Մուշկուրի շրջանի Ղարաջալու գիւղում բնակուող 4 գերդաստանների մասին, որոնք, ինչպէս քիլվարցիներն ու խաչմասցիները, խօսում են «պարսից աղաւաղեալ» լեզուով[90]։

Այսրկովկասում մնացած հայ-թաթերի ամենաբազմամարդ գիւղը Մադրասան էր։ ԺԹ. դարի վերջին այն ունէր 483 ծուխ, 2780 բնակիչ[91]։

Մաղրասա Գիւղի Ընդհանուր Տեսքը (1950ական Թուականներ)
Լուսանկարը տրամադրել է մաղրասացի Սոնա Խաչիկեանը

ԺԹ. դարի վերջին, ըստ Բարխուտարեանցի տեղեկութեան՝ Թաթախոս բնակչութիւն կար եւ Շամախու շրջանի Հնդար գիւղում։ Հեղինակը այս գիւղի մասին նշում է. «Լփնաց կողմից գաղթած է վերին Թաղի ժողովուրդը, որ բացի հայերէնից պահած է ցարդ եւ իւր նախնի բարբառը»[92]։ Ըստ Միլլէրի՝ Հնդարում ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկզբում կային ընտանիքներ, որոնք խօսում էին Թաթերէն՝ Մաղրասայի խօսուածքով[93]։ Այս գիւղում Թաթախոս բնակչութեան մասին նշում է նաեւ Ղալթախչեանը[94]։ Միլլէրը գտնում էր, որ այն հաւանաբար հայկականացած Թաթախոս գիւղ է[95]։ Կարծում ենք, սակայն, որ Միլլէրի այդ կարծիքը չափազանցուած է. հնարաւոր է, որ ԺԹ. դարի վերջին մի քանի Թաթախոս ընտանիքներ հաստատուած լինէին այդ գիւղում։ Հայ-Թաթերի փոքր խումբ հնարաւոր է եւ լինէր Դերբենդ քաղաքում[96]։ Այնուամենայնիւ Այսրկովկասում հայ-Թաթերի հիմնական բնակավայրերն էին վերը նշուած Մաղրասա, Քիլվար եւ Խաչմաս գիւղերը։

Այսպիսով, ԺԸ. դարում Արեւելեան Այսրկովկասում դեռեւս կային շուրջ մէկ տասնեակից աւելի գիւղեր, որոնցում բնակւում էր Թա-

թախօս հայադաւան բնակչութիւն: Ակտիւ այլէթնիկ եւ այլադաւան միջավայրը, ինչպէս նաեւ քաղաքական իրադարձութիւնները, որոնք ուղեկցւում էին էթնիկական եւ դաւանական հակադրութիւնների սրմամբ, ինչպէս նաեւ քրիստոնեաների հանդէպ կիրառուող էթնոդաւանական ագրեսիւութեամբ, անհնարին դարձրին հայ-թաթերի յետագայ գոյութիւնը իրենց պատմական հայրենիքում: Հայ-թաթերի զգալի մի հատուած, ԺԸ.դարի վերջին, ռուսական զօրքերի հետ գաղթեց եւ հիմնականում հաստատուեց Հիւսիսային Կովկասի արեւելեան եւ կենտրոնական շրջաններում՝ Ղզլարում եւ շրջակայքում, Մոզդոկում, Սուրբ Խաչում եւ Եղեսիայում: Այս շրջաններում հանդէս եկան հաւաքական նոր բնակավայրեր, որոնց մէջ եւ կային իրենց նախկին գիւղերի անուններով գիւղեր՝ Ղարաջալի եւ Մոլլա-Խալիլ (վերջինս գոյատեւեց մինչեւ 1830-40-ականները): Արտագաղթող հայ-թաթերի մի մասն էլ ցրուեց ռուսաստանեան եւ կովկասեան զանազան քաղաքներում ու բնակավայրերում: Հայ-թաթերի մի այլ հատուած էլ պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ներառեալ՝ ԺԸ. դարում, մահմեդականացուեց: Վերջիններիս մի զգալի մասի մօտ դեռեւս ԺԹ. դարում պահպանւում էին իրենց քրիստոնէական անցեալի մասին յիշողութիւններ: ԺԹ. դարի վերջին իրենց պատմական հայրենիքի միայն երեք գիւղերում մնացել էին այս խմբի բեկորները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սերգէյ Ղալթախչեան, «Հայ-Պարսիկները (Հայ-Թաթերը) եւ Նրանց Լեզուն», *Իրան-Նամէ*, թիւ 1, 1995, էջ 8-9. V. Voskanian, 'Indo-iranskie etnicheskie gruppi v Armenii' [Հնդ-Իրանական էթնիկական խմբերը Հայաստանում], տե՛ս՝ *Tsentralnaia Aziia i Kavkaz* [Կենտրոնական Ասիա եւ Կովկաս], թիւ 5, 1999, էջ 89.

[2] «Թաթեր» եւ «Թաթերէն», տե՛ս՝ *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հ. 4, Երեւան, 1978, էջ 120. M. Matatov, 'K voprosu o tatskom etnose' [Թաթական էթնոսի Ծագման Հարցի Մասին], *Sovetskaia Etnografiia* [Խորհրդային Ազգագրութիւն], թիւ 5, 1981, էջ 109-112. Zh. Golotvin and M. Matatov, 'Tati' [Թաթեր], *Voprosi istorii* [Պատմութեան Հարցեր], թիւ 11, 1986, էջ 187. M.Matatov, 'Tatskaia narodnost: istoriia i problemi' [Թաթական Ժողովուրդը. Պատմութիւն եւ Հարցեր], *Rossiiskaia ezhegodnik* [Ռուսաստանեան Տարեգիրք], թողարկում II, 1990, էջ 53-62.

[3] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն*, հ. 1, Երեւան, 1940, էջ 322. Ս. Բարխուդարեան, «Դերբենդի Հայ-Ազուանական Թագաւորութիւնը», *Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3, 1969, էջ 125-143. V. Grigorian, *Nasilstvennaia assimiliatsiia musulmanskikh natsionalnikh menshistv v Azerbaidzhane* [Մուսուլմանական

Ազգային Փոքրամասնությունների Բռնի Զուլումը Ադրբեջանում], Երևան, 1992, էջ 36։

[4]Այս խմբի վերաբերեալ կատարուած է միայն լեզուաբանական ուսումնասիրութիւն։ Հայ-թաթերէն բարբառը ուսումնասիրել է բանասէր Սերգէյ Ղալթախչեանը. տե՛ս՝ Ս. Ղալթախչեան, Մադրասացիների Թաթերէն Լեզուն, թեկնածուական դիսերտացիա, Երևան, 1972։

[5]A. Lopukhin, 'Zhurnal puteshestviia cherez Dagestan, 1718' [Դաղստանի Վրայով Ճանապարհորդութեան Պարբերագիր, 1718], *Istoriia, geografiia i etnografiia Dagestana* [Դաղստանի Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Ազգագրութիւն], Մոսկուա, 1958, էջ 7, 53։

[6]Նոյն, էջ 8, 53-54։

[7]P. Butkov, *Materiali dlia novoi istorii Kavkaza c 1722 po 1803g.* [Նիւթեր Կովկասի Նոր Պատմութեան Համար 1722ից Մինչեւ 1803 Թուականը], Սանկտ Պետերբուրգ, 1869, հ. 1, էջ 8-11։

[8]*Armiano-russkie otnoshenia v XVIII v.* [Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԸ. Դարում], Երևան, 1967, հ. 2, մաս II, էջ 230-233։

[9]Նոյն, էջ 351։ Մոլլա-Խալիլ (Մալախալիլ) եւ Նուգդի գիւղերը գտնուում էին Դերբենդի նահանգում։

[10]Նոյն, էջ 351-352։ Այս ծանօթագրութիւնները կազմել են ժողովածուի խմբագիր Աշոտ Յովհաննիսեանը, Վ. Մարտիրոսեանը եւ Ս. Տէր-Ավակիմովան։

[11]J. Potocki, *Voyage dans les steppes d'Astrakhan et du Caucase*, t. 1, Paris, 1829, էջ 104-105։

[12]«Պարսիկներ» բառն այստեղ, անշուշտ, գործածուում է «պարսկական իշխանութիւն» իմաստով, քանի որ շրջապատող գիւղերի բնակիչները իրականում էթնիկ պարսիկներ չէին։

[13]*Armiano-russkie otnosheniia v XVIII v.*, հատոր 4 (1760-1800 թթ.), Երևան, 1990, էջ 433-434։

[14]Նոյն, էջ 434-435։

[15]Նոյն, էջ 448։

[16]Lopukhin, էջ 7, 53։

[17]Butkov, էջ 94։

[18]Մակար Ծ. Վրդ. Բարխուտարեանց, Աղուանից Երկիր եւ Դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 126, 142-143։

[19]Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի Վանաց Մաղիանի եւ Միւս Վանօրէից եւ Ուխտատեղեաց Նեւս եւ Քաղաքացն եւ Գիւղօրէից Որք Ի Շամախիոյ Թեմի, Տփխիս 1896, էջ 513։

[20]Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 126։

[21]Նոյն, էջ 136-139։

[22]Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 135։ Կոմս Վ. Ա. Զուբովը 1796ի արշաւանքի ընթացքում ռուսական բանակի հրամանատարն էր։

[23]Հ. Մարաղեան, «Սուրբ Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի Մատուռը», Նոր-Դար, թիւ 5, 1891։

[24] *Մեղու Հայաստանի*, թիւ 1-2, 1859։

[25] *Բարխուտարեանց, Աղուանից Երկիր*, էջ 143։

[26] B. Miller, *Tati: ikh rasseleniia i govori* [*Թաթեր. Նրանց Տարաբնակեցումն Ու Խօսուածքները*], *Բաքու*, 1929, էջ 15։

[27] *Լեւոն Պողոսեան, «Հիւսիսային Կովկասում Հայկական Գաղթավայրերի Հիմնադրման Մասին (XVIII դ.)», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, թիւ 6 (510), *Յունիս* 1985, էջ 61։

[28] Miller, էջ 15։

[29] *Սմբատեանց*, էջ 543-545։

[30] Miller, էջ 14։

[31] *Սմբատեանց*, էջ 513-514։

[32] *Armiano-russkie otnosheniia*, հ. 4, էջ 449։

[33] Miller, էջ 14. *Ս. Ղալթախչեան, «Համառօտակի Մագրասայի Հայ-Թաթերէնի Մասին», տե՛ս՝ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, Տեղեկագիր (Հասարակական Գիտութիւններ)*, թիւ 4, *Ապրիլ* 1957, էջ 86։

[34] *Armiano-russkie otnosheniia*, հ. 4, էջ 478։

[35] *Նոյն*, էջ 501-502, 513-516։

[36] *Akti Kavkazskoi arkheograficheskoi kommisii* (*այսուհետեւ՝* AKAK) [*Կովկասեան Հնագրագիտական Ցանձնախումբի Արձանագրութիւնները*], հ. 5, *Թիֆլիս*, 1873, էջ 853։

[37] Butkov, էջ 155։

[38] *Պաւէլ Զորաեան, «Ռուսահայոց Գաղթօջախի Բնակչութեան Քանակական Կազմը (XVIII Դարի Վերջին Քառորդ)», Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3 (149), 1998, էջ 64։

[39] AKAK, հ. 10, *Թիֆլիս*, 1885, էջ 707-709։

[40] *Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան Պետական Կենտրոնական Արխիւ* (*այսուհետեւ՝ ՀՀ ՊՊԿԱ*), *Ֆոնդ* 52, *ցուցակ* 1, *գործ* 25, *թուղթ* 22-23։

[41] AKAK, հ. 6, *մաս* II, *Թիֆլիս*, 1875, էջ 592-593։ *Կարծում ենք թէ «Կարգալինսկոյէ» անուանումը վրիպակ է եւ պէտք լինի «Կարաժալինսկ», քանի որ այն կար դեռեւս* 1813*ին*։

[42] *Մինաս Վարդապետ Բժշկեանց, Ճանապարհորդութիւն Ի Լեհաստան Եւ Այլ Կողմանս Բնակեալս Ի Հայկազանց Սերկոց Ի Նախնաց Անի Քաղաքին*, *Վենետիկ*, 1830, էջ 405։

[43] *ՀՀ ՊՊԿԱ*, *Ֆ*. 52, *ց*.1, *գ*. 88, *թ*. 1, 7, 10։

[44] *Նոյն*, *գ*. 25, *թ*. 29, 33։

[45] N. G. Volkova, 'O rasselenii armian na Severnom Kavkaze do nacahala XX v.' [*Մինչեւ Ի. Դարի Սկիզբը Դէպի Հիւսիսային Կովկաս Հայերի Տարաբնակեցման Մասին*], *Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3 (34), 1966, էջ 261։

[46] *Նոյն*։

[47] *Սարգիս Զալալեանց, Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան*, հ. 2, *Թիֆլիս*, 1858, էջ 450։

[48] *Նոր-Դար*, թիւ 110, 1890։

[49] Դիւան Հայ Վիմագրութեան, պրակ VIII. Ռուսաստանի Դաշնութիւն, աշխատասիրութեամբ Գր. Մ. Գրիգորեանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1999, էջ 161։
[50] Potocki, էջ 185-186։
[51] AKAK, հ. 6, մաս II, Թիֆլիս, 1875, էջ 593։
[52] Նոյն, հ. 7, Թիֆլիս, 1878, էջ 950։
[53] Նոյն, հ. 10, Թիֆլիս, 1885, էջ 707-709։
[54] Նոյն, էջ 711։
[55] ՀՀ ՊՊԿԱ, Ֆ.57, ց. 2, գ. 1905, թ. 7։
[56] Նոր-Դար, թիւ 201, 1894։
[57] Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 143։
[58] Ջալալեանց, էջ 451-452։
[59] Sobranie aktov otnoiashchikhsia k obozreniiu istorii armianskogo naroda [Հայ Ժողովրդի Պատմութեան Տեսութեան Վերաբերեալ Փաստաթղթերի Ժողովածու], մաս II, Մոսկուա, 1838, էջ 76։
[60] Նոր-Դար, թիւ 172, 1884։
[61] ՀՀ ՊՊԿԱ, Ֆ. 227, ց. 1, գ. 135, թ. 53։
[62] Miller, էջ 15։
[63] Volkova, էջ 260։
[64] Miller, էջ 14։
[65] Սմբատեանց, էջ 513։
[66] Ջալալեանց, էջ 398։
[67] Miller, էջ 13։
[68] Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 125-126,146։ Տե՛ս նաև՝ Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա. հատոր, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1902, էջ 26։
[69] Ջալալեանց, էջ 424։
[70] Miller, էջ 14։
[71] Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 136-139։
[72] Miller, էջ 14։
[73] Նոյն, էջ 13։
[74] Բարխուտարեանց, Աղուանից Երկիր, էջ 289-291։
[75] Svod staticheskikh dannikh o naselenii Zakavkaskogo kraia, izvlechennikh iz posemeinikh spiskov 1886 g. [Անդրկովկասեան Երկրամասի Բնակչութեան Մասին Վիճակագրական Տուեալների Ժողովածու, Քաղուած 1886 թուականի Ընտանեկան Ցուցակներից]. Թիֆլիս, 1893։
[76] Արսէն Յակոբեան, դաշտային ազգագրական նիւթեր, տեսր I, 1999, էջ 109։
[77] Նոյն, տեսր II, էջ 30։
[78] Miller, էջ 13-14։
[79] Նոյն, էջ 13։
[80] Svod։
[81] Նոյն։

[83] *Սմբատեանց*, էջ 546։
[82] F. F. Simonovich, 'Opisaniia iuzhnogo Dagestana 1796 g.' [*Հարաւային Դաղստանի Նկարագրութիւնը* 1796 *թուականին*], տե՛ս՝ *Istoriia, geografiia i etnografiia Dagestana*, էջ 146. Butkov, էջ 94. S. Bronevskii, *Noveishie geograficheskie i istoricheskie izves-tiia o Kavkaze* [*Աշխարհագրական եւ Պատմական Նորագոյն Տեղեկութիւններ Կովկասի Մասին*], հ. 2, *Մոսկուա*, 1823, էջ 383։
[84] *Kavkazskii kalendar na 1857 g.* [*Կովկասեան Տարեցոյց* 1857 *թուականի*], *Թիֆլիս*, 1856։
[85] *Սմբատեանց*, էջ 543։
[86] *Նոր-Դար*, թիւ 110, 1890։
[87] Miller, էջ 15։
[88] *Նոյն*։
[89] *Բարխուտարեանց*, *Ազուանից Երկիր*, էջ 139։
[90] *Մեղու Հայաստանի*, թիւ 38, 1871։
[91] *Բարխուտարեանց*, *Ազուանից*, էջ 166-167։
[92] *Նոյն*, էջ 181։
[93] Miller, էջ 13։
[94] *Ղալթախչեան*, էջ 85-96։
[95] Miller, էջ 13։
[96] *Սմբատեանց*, էջ 513։

FROM THE HISTORY OF THE DEMOGRAPHIC DISTRIBUTION AND DEPORTATIONS OF ARMENIAN-TATS
(early 18th - late 19th cc.)
(Summary)

ARSEN HAKOBIAN

The article discusses the history of those Tats who were also followers of the Armenian Church living in the regions of Derbend, Kuba and Mushkur in north-eastern Transcaucasia in the 18th century. After the Russian invasion of Transcaucasia in 1796, many of them migrated to the regions of Kizlar and Astrakhan in the North Caucasus in Russia, where they established new towns and villages. The article also focuses on various instances of collective conversion to Islam by members of this ethnic group. By the end of the 19th century, there were only three villages in Transcaucasia which were still inhabited by Tat-speaking members of the Armenian Church.